Արձանագրություն N 2
«ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Մարալիկ

18 օգոստոսի 2017թ. ժամը 11:00,
ք. Մարալիկ, Մադաթյան 1
Մարալիկի համայնքապետարան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Պետրոսյան, իրավական հարցերով պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ +ԳՊ/ԳԱ)

Հանձնաժողովի անդամներ՝ Ք. Մկոյան, Մարալիկի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղար (ԳՊ/ԲԱ)

Ա. Սաղաթելյան, Մարալիկի համայնքապետարանի գլխավոր մասնագետ-հաշվապահ (ԳՊ/ԳԱ)

Ա. Առաքելյան, Մարալիկի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ (ԳՊ/ԲԱ)

Ռ. Խաչատրյան – հաշվային գործակալ (ԳՊ/ԳԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Նիկոյան, Մարալիկի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ (ԳՊ/ՄՀմ )

**1. Գնային առաջարկների բացման մասին**

---

**Ի. Պետրոսյան**

1) *Հայտերի բացման.*
-վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Մադաթյան 1, Մարալիկի համայնքապետարան,
-օրը՝ 18 օգոստոսի 2017թ., ժամը՝ 11:00 :

2) Ընդունել ի գիտություն, որ՝
- *ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի համայնքապետարանի 2017թ. կարիքների համար Մարալիկ համայնքի կենտրոնական հրապարակի օվալաձև կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման համար ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/5 ծածկագրով ընթացակարգի հրավերին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.*

| N | Մասնակցի անվանումը | հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի Փ. բն.87<br>ՀՎՀՀ 05537917<br>elitarmanshin.llc@mail.ru |
| 2. | <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ | Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հր. Շահինյան<br>Հեռ. 093-434287,<br>էլ. հասցեն՝ anichshsh@rambler.ru<br>ՀՎՀՀ 06000133 |

3) *Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին*

- Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ, <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ :

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

4) *Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- Մասնակիցների կողմից ներկայացված պահանջվող փաստաթղթերը առկա են:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0*

5) *Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.*

- Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր կազմել և ներկայացրել է<<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ-ն:

Բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում արձանագրվել է.

<<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ- Մասնակիցը հայտի ապահովումը /N9 հավելված/ ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 1-ին կետի վճարման պահանջագրի համարը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս: Մասնակցի կողմից ներկայցված վճարման պահանջագիրը համարակալված է (Վճարման պահանջագիր N 1), որը չի համապատասխանում <<Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի>> պահանջներին:

Հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է (համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> պահանջների համաձայն):

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0*

6) *Համապատասխան հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝*

| Չափաբաժնի համարը | Նախահաշվային Գինը, ՀՀ դրամ | Մասնակցի | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Անվանումը | Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ/ ՀՀ դրամ | ԱԱՀ ՀՀ դրամ | Մասնակցի առաջարկած գին /ընդհանուր/ ՀՀ դրամ |
| 1 | 12348980 | <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ | 7790733 | 1558147 | 9348880 |
| 2. | 12348980 | <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ | 10100000 | 2020000 | 12120000 |

7) *Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.*

- Հայտի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0*

2, Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1) Գնահատման արդյունքում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Անիի ՃՇՀ>> ՍՊԸ -ին:
2) Հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ոչ ավտոմատ եղանակով ծանուցել առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ maralik.shirak@mta.gov.am ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
3) Էլեկտրոնային եղանակով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0*

3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և հանձնաժողովի անդամներին գնահատման թերթիկների տրամադրման հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, ք. Մարալիկ, Մադաթյան 1 հասցեով, Մարալիկի համայնքապետարանում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________________ Ի. Պետրոսյան

Քարտուղար

____________________ Լ. Նիկոյան

Անդամներ՝ ____________________ Ք. Մկոյան

____________________ Ա. Սաղաթելյան

____________________ Ա. Առաքելյան

____________________ Ռ. Խաչատրյան